ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. դեկտեմբերի 6-9-ը Սիրիայի Արաբական Հանրապետություն (Դամասկոս) գործուղման արդյունքների մասին

1. **Գործուղվողը՝** Արսեն Պողոսյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ ՀՀ ԿԱ ՔԱԳՎ) պետի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Սիրիայի Արաբական Հանրապետություն (Դամասկոս), 2017թ. դեկտեմբերի 6-9-ը:

Հրավիրող կողմը՝ Մոհամմադ Էիդ Զեդանի, Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տնօրեն:

4. **Գործուղման նպատակը՝**

- Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) կողմից սահմանված ավիացիոն անվտանգության պահանջներին Սիրիայի Արաբական Հանրապետության Դամասկոս քաղաքի միջազգային օդանավակայանի ավիացիոն անվտանգության համակարգի համապատասխանության ուսումնասիրություն:

5. **Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը**

ՀՀ ԿԱ ՔԱԳՎ պետի տեղակալ Արսեն Պողոսյանը 2017թ. դեկտեմբերի 6-9-ը ունեցել է մի շարք հանդիպումներ, մասնավորապես՝

- Դամասկոս քաղաքի միջազգային օդանավակայանում ծանոթացել է օդանավակայանային ենթակառուցվածքներին, ուսումնասիրել է օդանավակայանի ավիացիոն անվտանգության ապահովման համակարգը:
- հանդիպումներ է ունեցել Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ Բուշրա Յուսսեֆի, ավիացիոն անվտանգության ստորաբաժանման ղեկավար Մարինա Ամմարի և «Շամ Էյր Վինգզ» ավիաընկերության տնօրեն Խալեդ Ալ Թաչերի հետ, որոնց հետ քննարկվել են

ավիացիոն անվտանգության վերաբերյալ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

- հանդիպում է ունեցել Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ պարոն Մոհամեդ Էիդ Զեդանի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև օդային հաղորդակցության մասին նոր համաձայնագրի նախագիծը և «Շամ Էյր Վինգզ» ավիաընկերության Դամասկոս-Երևան-Դամասկոս չվերթներ իրականացնող օդանավերում օդային մարշալների կիրառման վերաբերյալ երկկողմանի համաձայնագրի կնքման հարցը:
- հանդիպում է տեղի ունեցել Սիրիայի Արաբական Հանրապետության տրանսպորտի նախարար պարոն Ալի Համմուդի հետ, որի ընթացքում քննարկվել են օդային տրանսպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև երկկողմ համագործակցության հարցերը և ներկայացվել է տեղեկատվություն Դամասկոսի միջազգային օդանավակայանում իրականացված դիտարկումների վերաբերյալ: